ՀՀ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2019 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքների մասին հաշվետվության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2020թ.

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 02/09.11/58326-2019 հանձնարարականի՝ ներկայացվում է ՀՀ կառավարության 2019 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքների մասին հաշվետվության սեղմագիրը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ 13 միավորված համայնքների տրամադրվել է 19 միավոր կոմունալ և ինքնագնաց տեխնիկա:

- «ԵՄ-ն Շիրակի մարզի համար. Նոր աշխատատեղեր՝ շնորհիվ բրդի արտադրության» ծրագրի շրջանակում՝ Ամասիա համայնքում գործարկվեց բրդի վերամշակման գործարանը: Ծրագրի ընդհանուր արժեքը մոտ 550 հազար եվրո է: Առայժմ բացվել է 23 աշխատատեղ:
- Թվով 15 միավորված բազմաբնակավայր համայնքներում ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ)
- Թվով 4 միավորված բազմաբնակավայր համայնքներում ստեղծվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- 2019 թվականի նոյեմբերի 14-ին ընդունվել է «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքը:
- ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 3 657 994.3 հազ դրամ՝ 192 ծրագրերի իրականացման նպատակով:
- ԵՄ-ի ֆինանսավորմամբ և ազգային համաֆինանսավորմամբ, իրականացվում են **տարածաշրջանային զարգացման պիլոտային 8 ծրագրեր**: Ծրագրերի իրականացման արդյունքում արդեն իսկ ստեղծվել են շուրջ 180 նոր աշխատատեղեր և բարձրացվել է ավելին քան 160 ձեռնարկությունների մրցունակությունը:
- ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հատկացվել է շուրջ 928 մլն դրամ, որի շրջանակներում սոցիալական աջակցություն է տրամադրվել ընդհանուր առմամբ սահմանամերձ 16 համայնքի 38 բնակավայրերի ընտանիքներին:
- 2019 թվականի ընթացքում վերապատրաստվել են թվով 698 համայնքային ծառայողներ, 648 տեղական ինքնակառավարման մարմիններ (համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ), մարզպետարանների 73 աշխատակիցներ և սոցիալական 60 աշխատողներ: Երևանի քաղաքապետարանի աշխակազմում վերապատրաստվել են թվով 286 համայնքային ծառայողներ (Երևան համայնքի բյուջեի միջոցների հաշվին):

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- 2019թ. տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն 186 համայնքներում:
- Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված ԱԳԼՃԿ-ներում առկա սանիտարական հանգույցների վիճակի բարելավման ուղղությամբ ՀՀ մարզպետարաններում ձևավորված աշխատանքային խմբերի և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ իրականացվել են ԱԳԼՃԿ-ներում ստուգայցեր: ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գործող 351 ԱԳԼՃԿ-ներից 320-ը գտնվում են բարվոք վիճակում, իսկ 31 ԱԳԼՃԿ-ներում ձեռնարկվում են միջոցներ սանիտարական հանգույցների բարելավման ուղղությամբ: ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից ԱԳԼՃԿ-ներում հարուցվել են վարչական վարույթներ:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ (ԿԱՊԻՏԱԼ) ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- 2019 թվականին իրականացված 462 սուբվենցիայի ծրագրերը համաֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից 9,597 մլրդ դրամի չափով, իսկ համայնքների համաֆինանսավորման չափը կազմել է 6,8 մլրդ դրամ:
- Ավարտվել են Երևանի Ռ.Իշխանյանի անվան թիվ 153 և Վանաձորի Ա. Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոցների կառուցապատման աշխատանքները և հաստատվել է կառուցված երկու դպրոցների գույքի ձեռքբերման համար 58,489 մլն դրամ հատկացնելու վերաբերյալ որոշումը: Ներկայումս շինարարություն է իրականացվում թվով 7 դպրոցներում և թվով 24 դպրոցների համար ընթանում են նախագծային և տեղական ու միջազգային փորձաքննության աշխատանքները:
- Հայաստանի Ամերկյան Համալսարանի «Յակոբեան Հիմնադրամի» հետ համատեղ մշակվել է հանրապետության բնակավայրերում կոշտ կենցաղային թափոնների և աղբավայրերի տեղեկատվական բազայի և քարտեզագրման ծրագրային միջոցը և համակարգվել է շվեդական ընկերության կողմից հանրապետության բոլոր մարզերում գոյացող աղբի քանակի և տեսակի վերաբերյալ ուսումնասիրության աշխատանքները:
- Կազմակերպվել է համապետական 2 շաբաթօրյակ:
- Մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Աղբահանության համակարգի ռազմավարությունը:
- Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում մշակվել է սանիտարական աղբավայրի և երկու փոխաբեռնման կայանների շինարարության մրցութային փաթեթը և շինարարության միջազգային մրցույթը հայտարարվել է ս.թ. նոյեմբերի 20-ին:
- Մշակվել և սեպտեմբերից փորձնական գործարկման փուլում է գտնվում ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակը (www.regions4growth.am):
- «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում 2019 թվականին բարեկարգվել, հիմնանորոգվել, կահավորվել և արդիականացվել է 12 կմ քաղաքային ճանապարհ և 1 հրապարակ:
- Մշակվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու» և «Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք հավանության են արժանացել ՀՀ ԱԺ-ի կողմից:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- <<Լոկատոր>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրային պարտավորությունների շրջանակներում ստեղծվել է ներմարզային և միջմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների մշակման և դրանց շահագործման գործընթացի վերահսկողության ծրագրային համակարգը:

- «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից ձեռք է բերվել ժամանակակից պահանջներին համապատասխանող ԷՊ2Դ մակնիշի երկրորդ նոր էլեկտրագնացքը:
- Շարժակազմի նորացման շրջանակներում ձեռք է բերվել նաև 40 նոր բեռնատար կիսավագոն:
- 2019 թվականի արդյունքներով երկաթուղային բեռնափոխադրումների ծավալները կազմեցին 3,2 մլն տոննա, ինչը 11,1% գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ընդ որում, բեռնաշրջանառությունն ավելացել է 17,3%, արտահանումը՝ 25%, ներմուծումը՝ 12,5%, իսկ տեղական բեռնափոխադրումները՝ 6,9%: 11%-ով աճ է գրանցվել է նաև ուղևորափոխադրումների ոլորտում: Տարվա ընթացքում ուղևորների թիվը գերազանցեց 426,6 հազարը, միջազգային փոխադրումներն ավելացան 13%, տեղականները՝ 10%:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- 2019 թվականի ընթացքում ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից տրամադրվել է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների 18 լիցենզիա:
- ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից տրամադրվել թվով 12 երկրներ միջպետական բեռնափոխադրումների 963 թույլտվություններ, դեպի Ռուսաստանի Դաշնություն թվով 200 ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվություններ, տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի /ՏՆԵԿ/ 362 թույլտվություններ, ՀՀ տարածքով վտանգավոր բեռներ փոխադրելու 78 թույլտվություններ, չմասնատվող բեռներ փոխադրող, թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերը գերազանցող տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման 251 թույլտվություններ:
- ՀՀ ՏԿԵ նախարարության տրամադրվել է 152 անվճար երթևեկության իրավունքի վկայականներ, որից՝ 6 հատ 5 և ավելի երեխաներ ունեցող ծնողներից մեկին, 6 ծերանոցներում, մանկատներում ապրող պետական խնամքի տակ գտնվող անձանց, իսկ 140 հատ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների:
- 2019 թվականի օգոստոսի 1-ից ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից առևտրային բանկերին տրամադրվել է ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության 245.000 կտրոններ, տեխնիկական զննության կայաններին տրամադրվել է ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության 1800 տեխնիկական զննության կտրոններ իսկ e-paiments համակարգով էլեկտրոնային եղանակով կատարված վճարումներով լրացվել և դիմումատուներին է առաքվել 1730 ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոններ:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Վերջնականցվել են Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի, ենթակայանի և փոխակերպիչ կայանի կառուցման նպատակով 2020թ. միջազգային մրցույթ հայտարարելու համար անհրաժեշտ աշխատանքները:
- 2019թ. ընթացքում Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի շրջանակներում շարունակվել են արդիականացման աշխատանքները, այդ թվում Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ռեակտորի և 3-րդ տուրբոգեներատորի վերանորոգման ու արդիականացման, ինչպես նաև 4-րդ տուրբոգեներատորի արդիականացման աշխատանքները:
- Մեկնարկել են 2-րդ փուլի աշխատանքները Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում՝ Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ծրագրով:
- ՀՀ կառավարությունը 2019թ. դեկտեմբերին հավանություն է տրվել «Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագրին, որի շրջանակներում ՀՀ Արագածոտնի և ՀՀ Կոտայքի մարզերի վարչական սահմաններում նախատեսվում է երկու փուլով իրականացնել 400 ՄՎտ արևային ֆոտովոլտային կայանների կառուցում:

ԸՆԴԵՐՔԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Մեկ պատուհանի սկզբունքի կիրառմամբ տրամադրվել է 33 ընդերքօգտագործման իրավունք (օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 17 և երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով 16),

ՀՀ տարածքից հանքային հումքի տեսակների արտահանման՝ 9 (ինը) մեկանգամյա լիցենզիա և 1 (մեկ) գլխավոր լիցենզիա:

- Մերժվել է.
  - օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն հայցելու 15 (տասնհինգ) դիմում,
  - օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն հայցելու 17 (տասնյոթ) դիմում:Դադարեցվել է՝ 28 ընդերքօգտագործման իրավունք:
- Ընդերքօգտագործման իրավունք ունեցող 204 ընկերություններ զգուշացվել են ընդերքօգտագործման վճարման ապառքների մասով և աշխատանքային նախագծում ամրագրված պահանջները և օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրերով սահմանված պարտավորությունները սահմանված ժամկետներում չկատարելու հիմքով: Արդյունքում շուրջ 600 մլն դրամ ապառք է վճարվել ՀՀ պետական բյուջե:
- Ոլորտի օրենսդրական համապարփակ կարգավորումների ամրագրման նպատակով մշակվել և 2019 թվականի ապրիլի 23-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-24-Ն, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-25-Ն ու «Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-26-Ն ՀՀ օրենքները, «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-256-Ն և «Պետական տուրքի մասին

օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-257-Ն օրենքները

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- 2019 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են շուրջ 294,3 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհներ և 2 տրանսպորտային օբյեկտներ:
- Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի շրջանակներում 2019թ. ընթացքում վերականգնվել են շուրջ 70,5 կմ ընդհանուր երկարությամբ 9 ճանապարհահատվածներ:
- Տեղադրվել են 3892 նշաններ հանրապետության 420 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներում:
- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի շրջանակներում էապես բարելավվել է Տրանշ-3-ում՝ Թալին-Գյումրի 46.17 կմ երկարությամբ ճանապարհահատվածում իրականացվող աշխատանքների ծավալը: Թալին–Լանջիկ ճանապարհահատվածում (18.70 կմ) 2019թ. ընթացքում իրականացվել է հողային աշխատանքների ընդհանուր ծավալի շուրջ 83%-ը և բետոնյա կառուցվածքների ընդհանուր ծավալի շուրջ 59%-ը: Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածում (27.47 կմ) կատարվել է հողային աշխատանքների ընդհանուր ծավալի շուրջ 53%-ը և բետոնյա կառուցվածքների ընդհանուր ծավալի շուրջ 33%-ը:
- Տրանշ-4-ի Քաջարան-Ագարակ հատվածի մանրամասն նախագծման համար հայտարարվել է միջազգային մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Այ Առ Դի Ինջենիրինգ (Իտալիա) և Ջի Փի Ինջեներիա (Իտալիա)» ՀԳ ընկերությունը: Նախագծման աշխատանքները մեկնարկել են:
- 2019 թվականի նոյեմբերին ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից Առևտրի միջազգային պալատ է ներկայացվել դիմում «Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» բաժնետիրական ընկերության նկատմամբ արբիտրաժային գործընթաց սկսելու վերաբերյալ:
- 2019թ. ընթացքում շարունակվել են Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի՝ «Թումանյան» կայարան-Բագրատաշենի սահմանային անցակետ 51.7 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

- Լուծարվող կազմակերպություններում մարվել է շուրջ 288 մլն. դրամ կրեդիտորական պարտք, որից ՀՀ պետական բյուջե՝ 197 մլն. դրամ: ՀՀ պետական բյուջեի «Լուծարվող պետական փակ բաժնետիրական ընկերությունների հաշվարկային հաշիվներում մնացած դրամական միջոցների հավաքագրում» եկամտային հաշվին փոխանցվել է 76 մլն. դրամ:
- Մշակվել և 09.12.2019թ.-ին ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 12 ընտանիքի վերաբերյալ՝ 33 անձ, 15 սենյակ:
- Նախապատրաստվել և շրջանառության մեջ է դրվել «Բնակելի տարածք նվիրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 43 ընտանիքի վերաբերյալ՝ 103 անձ, 43 սենյակ:
- «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ում անցկացվել է 41 միջոցառում, որի արդյունքում ՊՈԱԿ-ի հասույթը կազմել է 207 մլն.դրամ: 2019 թվականի ընթացքում հաշվարկվել և ՀՀ պետական բյուջե է վճարվել 96 մլ.դրամի հարկեր և պարտադիր վճարներ:
- պետական **գույքի օտարումից** ստացված միջոցները կազմել են 141 մլն.դրամ, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 121մլն. դրամ,
- պետական **գույքի մասնավորեցումից** ստացված միջոցները կազմել են 56 մլն. դրամ, որից՝ ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 55 մլն. դրամ,
- պետական **գույքի վարձակալությունից** փաստացի ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 302 մլն.դրամ:
- ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում **կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերից** փաստացի մուտքագրվել է 231 մլն. դրամ, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 66 մլն. դրամ,
- **պետական սեփականություն համարվող հողերի** կադաստրային արժեքի վճարումից մուտքերը կազմել են 183 մլն. դրամ:

Վերը նշված հոդվածներով ստացված դրամական միջոցները կազմել են են 914,97 մլն. դրամ, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 729,4 մլն. դրամ:

Հարուցված հայցերի և արտադատական կարգով ՀՀ պետական բյուջե է վերադարձվել 22 մլն. դրամ գումար:

ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

- 2019 թվականին <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ապահովվել է 2 մլրդ. դրամի չափով ՀՀ պետական բյուջեի մուտքեր:
- Սակագնի բարձրացում թույլ չտալու համար, <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի հետ 2019 թվականի հուլիսի 25-ին կնքվել է N13 համաձայնագիր, որի արդյունքում 2020 թվականի համար սահմանվել է նույն սակագինը, որը գործում էր 2017 թվականին:
- Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2019 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 26.53 մլրդ դրամ՝ 2018 թվականի 23.85 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 2.7 մլրդ դրամ:
- 2019 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 12.5 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

- 2019 թվականի հունիսի 6-ին ընդունվել է <<Ոռոգման նպատակով 2019 թվականին Սևանա լճից ջրառի մասին>> ՀՀ կառավարության N 698-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2019 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170 մլն խոր.մ:
- 2019 թվականի հունիսի 8-ից մինչև նոյեմբերի 1-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 147.2 մլն խոր.մ ջուր, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բաց է թողնվել 200.623 մլն խոր.մ ջուր, իսկ Արփա-Սևան թունելով մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը Սևանա լիճ է տեղափոխվել 157.271 մլն խոր.մ ջուր: Սևանա լճի մակարդակը 2019 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 1900,46 մ, 2018 նույն օրվա դրությամբ 1900.41, որն ավել է 5 սմ-ով:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

- Տարվա ամփոփ տվյալներով՝ ստացվել է 247 ապաստանի հայց, փախստական են ճանաչվել և ապաստան են ստացել 113-ը:
- Նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության որոշմամբ՝ հատկացվել է 1,5 մլրդ դրամ՝ Երևանի 5 վարչական շրջաններում բնակվող առաջնահերթ ծրագրի շահառու հանդիսացող Ադրբեջանից բռնագաղթած կարիքավոր 112 ընտանիքների բնակապահովման խնդրի լուծման համար:
- Իրականացվել է 30 նոր ճանաչված փախստականների կարիքների գնահատում և անհատական ինտեգրման պլանների կազմում, 10 փախստական մասնակցել է հայոց լեզվի դասընթացներին, 13 փախստականներ ավարտել են քաղաքացիական կողմնորոշման դասընթացը, 17 փախստական ընտանիքների տրամադրվել է բնակվարձի ինևամսյա փոխհատուցում՝ 60 հազարական դրամի չափով:
- Վիզաների ազատականացման գործընթացի լույսի ներքո մշակվել է միգրացիայի համալիր կառավարման նոր հայեցակարգ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ

- 2019 թվականի ընթացքում Հայաստանին հնարավորություն է ընձեռվել նախագահելու ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ կազմակերպության մշտական հանձնաժողովը:
- 2019 թվականի նոյեմբերի 7-ից ՀՀ և Վրաստանի օդային տարածքում ներդրվել է միասնական «Մայրուղիներից ազատ Հարավ Կովկասյան օդային տարածքի» հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս իրականացնել թռիչքներ Հայաստան Վրաստան օդային սահմանի հատման պարզեցված գործընթացներով:
- 2019 թվականի ընթացքում դեպի ՀՀ կանոնավոր փոխադրումներ են սկսել օտարերկրյա 6 նոր ավիաընկերություններ՝ ռումինական «Տարոմ», ուկրաինական «Սքայապ», ռուսական «Նորդ Ավիա», ռուսական «Իկառ», ռուսական «Իռ Աերո» Էյրլայնզ, իրաքյան «ՅՈՒԱՐ Էյրլայնզ»: 2019 թվականի դեկտեմբերից ռուսական «Ազիմուտ» ավիաընկերությունը շաբաթական մեկ հաճախականությամբ իրականացնում է Կալուգայից Երևան և հակառակ ուղղությամբ չվերթեր:
- Եթե նախկինում ունեցել ենք 7 ուղղություններ դեպի ԵՄ երկրներ, ապա 2020 թվականին իրականացվելու են 17 ուղղություններ:
- 2019 թվականի ընթացքում ՀՀ-ում գրանցվել են երկու Cessna ինքնաթիռներ, ընդ որում դրանցից մեկը բոլորովին վերջերս՝ դեկտեմբերի 9-ին, դարձել է ուսումնական կիրառման:
- Մշակվել է ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ընդունվել է 09.12.2019թ. ՀՕ-258-Ն օրենքով:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

Հ /h	Ցուցանիշի անվանումը	Չափման միավորը	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2019թ. կատարողականը 2018թ. նկատմամբ
1	Փոխադրված ուղևորներ	հազ.մարդ	1918.99	2117.961	2553.9	2856.7	3196.4	111.89
2	Փոխադրված բեռ և փոստ	տոննա	10175	18273	24624	18070	19511	107.97
3	Թռիչք-վայրէջքներ	հատ	9171	9325	10992	12076	13713	113.56
4	ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր	չվերթ	23553	20303	32472	43600	40171	92.14

2019 թվականի ընթացքում ՀՀից և դեպի ՀՀ օդային տրանսպորտով փոխադրվել է 3196395 ուղևոր, 2018 թվականի համեմատ աճել է 11.89 %-ով: